ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 17.06.2022թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2022/273

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ֆ. Մանգյանի

Պատվիրատու՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմ
Մասնակից՝ «Դամկար» ՍՊԸ

Մասնակցությամբ՝ «Դամկար» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Օհանյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-18/19» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ, կահույքի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 02.06.2022թ.-ի թիվ 26/26-1/9822-2022 գրությամբ «Դամկար» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>.**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի 27.11.2018թ.-ի թիվ 1.1/5058-18 գրության հիման վրա, 03.12.2018թ.-ին «Դամկար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի (Է. Սարգսյանի) 03.12.2018թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և տրվել թիվ ՍՑ-ԷՍ-2018/185 համարի ծածկագիրը:

«Դամկար» ՍՊԸ-ն 21.12.2018թ.-ին հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ նաև՝ Դատարան) ընդդեմ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի՝ մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելու պահանջի մասին:

Դատարանի 25.12.2018թ.-ի թիվ ԵԴ/30179/02/18 որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Միաժամանակ Դատարանի կողմից 25.12.2018թ.-ին կայացվել է հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշում, այն է՝ հայցի ապահովման նպատակով արգելվել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Է. Սարգսյանին ՍՑ-ԷՍ-2018/155 ընթացակարգով կատարելու որևէ գործողություն՝ «Դամկար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով մինչև վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

Բողոքներ քննող անձի (Է. Սարգսյանի) 09.01.2019թ.-ին կայացված թիվ ՍՑ-ԷՍ-2018/185 որոշմամբ ընթացակարգի քննությունը կասեցվել է՝ մինչև ԵԴ/30179/02/18 քաղաքացիական գործով վերջնական դատական ակտի կայացումը:

Դատարանի 26.05.2021թ.-ի թիվ ԵԴ/30179/02/18 որոշմամբ «Դամկար» ՍՊԸ-ի հայցն թողնվել է առանց քննության:

ՀՀ ֆինանսների նախարարությունը, հիմք ընդունելով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 26.05.2021թ.-ի թիվ ԵԴ/30179/02/18 որոշումը, ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի 23.05.2022թ.-ի թիվ 1/2235-2022 գրության հիման վրա, 02.06.2022թ.-ին «Դամկար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 02.06.2022թ.-ին:

03.06.2022թ.-ին www.gnumner.am պաշտոնական տեղեկագրում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2022/273 համարի ծածկագիրը:

08.06.2022թ.-ին և 17.06.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 08.06.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 17.06.2022թ.-ին:

2. <u>ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 27.11.2018թ.-ի թիվ 1.1/5058-18 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ Ազգային ժողովի կողմից զանազան կահույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-18/19» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի 09.11.2018թ. ժամը 11:15-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 Արձանագրության (կցվում է) 6-րդ կետով կայացված որոշմամբ Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել՝ «Դամկար» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն), 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «ԳՈՐԾ-555» ՓԲԸ-ն:

Ընկերության հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին կատարված հարցմանն (կցվում է) ի պատասխան ստացվել է տեղեկատվություն (կցվում է), ըստ որի՝ «Դամկար» ՍՊԸ-ն չի բավարարում «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջներին:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 23-րդ կետով և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ և 47-րդ կետերով՝ 15.11.2018թ. ժամը 11:15-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 Արձանագրության (կցվում է) 2-րդ կետով որոշել է նիստը

կասեցնել՝ առաջարկելով Ընկերությանը մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել առկա անհամապատասխանությունը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ արձանագրված անհամապա-տասխանությունը սահմանված ժամկետում «Դամկար» ՍՊԸ-ի կողմից չի շտկվել, ուստի Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով Կարգի 24-րդ կետի 2-րդ ենթակետով, 19.11.2018թ. ժամը 11:15-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 Արձանագրության 3-րդ կետով կայացրած որոշմամբ մերժել է վերջինիս հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացրել Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակից՝ «ԳՈՐԾ-555» ՓԲԸ-ին:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ «Դամկար» ՍՊԸ-ի տվյալները համապատասխան հիմքերով տրամադրում ենք ՀՀ ֆինանսների նախարարությանը:»:

Պատվիրատուն 23.05.2022թ.-ի թիվ 1/2235-2022 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով նաև հետևյալը.

«Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում քննված թիվ ԵԴ/30179/02/18 քաղաքացիական գործով 25.12.2018թ. կայացված որոշմամբ, որպես հայցի ապահովում, արգելվել էր ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Է. Սարգսյանին ՍՑ-ԷՍ-2018/185 ընթացակարգով կատարելու որևէ գործողություն հայցվորին՝ «Դամկար» ՍՊԸ-ին, «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների» ցուցակում ներառելու նպատակով՝ մինչև սույն գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

Վերոնշյալ քաղաքացիական գործով 26.05.2021թ. կայացվել է հայցն առանց քննության թողնելու մասին որոշում որպես վերջնական դատական ակտ, որը չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ: Որոշման եզրափակիչ մասի 2-րդ պարբերությունում սահմանված է. «Որոշման օրինական ուժի մեջ մտնելուց հետո վերացնել Դատարանի 25.12.2018թ. որոշմամբ կիրառված հետևյալ հայցի ապահովման միջոցը. «Արգելել ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Է. Սարգսյանին ՍՑ-ԷՍ-2018/185 ընթացակարգով կատարելու որևէ գործողություն հայցվորին՝ «Դամկար» ՍՊԸ-ին, «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների» ցուցակում ներառելու նպատակով՝ մինչև սույն գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը»:

Կից ներկայացնում ենք օրինական ուժի մեջ մտած 26.05.2021թ. թիվ ԵԴ/30179/02/18 որոշման բնօրինակը՝ երկրորդ կնիքով հաստատված, որը խնդրում ենք հիմք համարել

կասեցումը վերացնելու և ՀՀ գնումների հետ կապված ՍՅ-ԷՍ-2018/185 ընթացակարգի վերսկսման համար:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-18/19» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Դամկար» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Դամկար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 03.06.2022թ.-ի գրությամբ դիմել է «Դամկար» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 02.06.2022թ.-ի թիվ 26/26-1/9822-2022 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

«Դամկար» ՍՊԸ-ն ներկայացրած գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է գտնվում ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի (այսուհետ՝ Պատվիրատու) գրավոր հիմքերի համաձայն, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «Դամկար» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՅ-ԼՕ-2022/273 ընթացակարգը (այսուհետ՝ Ընթացակարգ):

1.1. Ընկերությունը մասնակցել է Պատվիրատուի հայտարարած թիվ ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-18/19 ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Մրցույթ): Մրցույթի թիվ 3 արձանագրության համաձայն՝ 19.11.2018թ.-ին Ընկերության հայտը մերժվել է:

Թիվ ԵԴ/30179/02/18 քաղաքացիական գործով ներկայացված հայցադիմումով Ընկերությունը փաստել է, որ Պատվիրատուն Ընկերությանը Ցուցակում ներառելու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարություն է դիմել 27.11.2018թ.-ի թիվ 1.1/5058-18 գրությամբ (այսուհետ՝ Գրություն), ինչի վերաբերյալ Պատվիրատուի ներկայացուցիչը դատարանում չի առարկել, ավելին՝ ընդունել է:

Վերը նշված փաստերից հետևում է, որ Պատվիրատուն Ընկերությանը ցուցակում ներառելու վերաբերյալ հիմքերը ՀՀ ֆինանսների նախարարություն է ուղարկել ՀՀ

կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 45-րդ կետի խախտմամբ, այն է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ենթադրյալ հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող 6-րդ աշխատանքային օրը, մինչդեռ Կարգի նշյալ կետի համաձայն՝ դրանք ՀՀ ֆինանսների նախարարություն պետք է ուղարկվեին 5 աշխատանքային օրվա ընթացքում:

2.1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է «Ցուցակում», եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն (խմբ. 19.11.2018թ.-ի դրությամբ)՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերության հայտը մերժվել է 19.11.2018թ.-ին: Այնուհետև 6 (վեց) աշխատանքային օր անց՝ 27.11.2018թ.-ի թիվ 1.1/5058-18 գրությամբ Պատվիրատուն դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն սույն Ընկերությանը Ցուցակում ներառելու համար: Այսինքն, Պատվիրատուն Ընկերության տվյալները ՀՀ ֆինանսների նախարարություն է ուղարկել Կարգի 45-րդ կետով սահմանված 5 աշխատանքային օրյա ժամկետի խախտմամբ:

Վերոգրյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների համադրման արդյունքում՝ կարելի է փաստել, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ենթադրյալ հիմքերն ի հայտ են եկել 19.11.2018թ.-ին՝ Ընկերության հայտը մերժելու հիմքով, սակայն Պատվիրատուի կողմից Ընկերության տվյալները ՀՀ ֆինանսների նախարարություն է ուղարկվել 27.11.2018թ.-ի թիվ 1.1/5058-18 գրությամբ՝ Կարգի 45-րդ կետով սահմանված 5 աշխատանքային օրյա ժամկետի խախտմամբ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Ամբողջացնելով վերը թվարկված իրավական նորմերը, դրանց և գործում առկա փաստերի համադրման արդյունքնում՝ կարելի եզրակացնել, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

ՀՀ Վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացված որոշումներից մեկով կարևորել է, որ Հայաստանի Հանրապետության՝ որպես իրավական պետության կարևորագույն հատկանիշ է այն, որ սահմանադրական մակարդակով պետությունը հավաստում է իր հավատարմությունն այդ տեսությանը, ճանաչում և ամրագրում է իր կախվածությունն իրավունքից, իրավունքի գերակայությունը՝ պետական իշխանության նկատմամբ: Իրավական պետության և իրավունքի գերակայության սկզբունքը, ի թիվս այլոց, դրսևորվում է նրանում, որ Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների՝ որպես անմիջականորեն գործող իրավունք լինելու գաղափարը: Այն իր արտացոլումն է գտել նաև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 5-րդ (Իրավական նորմերի աստիճանակարգությունը) և 6-րդ (Օրինականության սկզբունքը) հոդվածներում՝ մասնավորապես ամրագրելով, որ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: (տե՛ս, «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ ընդդեմ Էդիկ Հակոբյանի թիվ ԼԴ/0509/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.07.2018թ.-ի որոշումը):

Այսպիսով, վերոգրյալից կարող ենք եզրակացնել, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետով սահմանված պարտադիր դրույթները, քանի որ ինչպես վերը նշվեց, Կարգի 45-րդ կետի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու իրավահարաբերության առկայությունը և դրանից հետո նոր միայն ըստ էության անդրադառնալ Պատվիրատուի կողմից ներկայացված Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված համապատասխան հիմքերի օրինաչափությունը:

Հարկ է նշել, որ վերոգրյալ դիրքորոշումը կրկնում է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից կայացված որոշումներում արտահայտած դիրքորոշումները (Օրինակ՝ տե՛ս Լիլիթ Դերձյան Ա/Ձ-ի վերաբերյալ 10.12.2021թ.-ի թիվ ՍՑ-ԼՕ-2021/320 որոշումը), բացի այդ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը ձևավորել է կայուն նախադեպային պրակտիկա և մերժում է նմանատիպ այն ընթացակարգերը որոնց վերաբերյալ հիմքերը պատվիրատուները ուղարկել են ՀՀ ֆինանսների նախարարություն Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետի խախտմամբ (տե՛ս ՍՑ-ԼՕ-2021/320, ՍՑ-ՆԳ-2022/85, ՍՑ-ԼՕ-2022/109 . . . որոշումները):

Ուստի կարծում ենք, որ վերոնշյալով պայմանավորված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Ընկերությանը՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:,

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 50-րդ հոդվածով և ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ.-ի թիվ 600-Ն հրամանի 1-ին կետով հաստատված կարգի 18-րդ կետով՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք ամբողջությամբ մերժել ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից «Դամկար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված՝ ՍՑ-ԼՕ-2022/273 ծածկագրով ընթացակարգը:»:

4. <u>ՍՑ-LO-2022/273 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կողմից կահույքի ձեռքբերման նպատակով 29.10.2018թ.-ին հայտարարվել է «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-18/19» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Դամկար» ՍՊԸ-ն:

iii. Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-18/19» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 15.11.2018թ.-ին նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից՝ «Դամկար» ՍՊԸ-ն չի բավարարում «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջներին:

v. Նույն արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 44-րդ և 47-րդ կետերը, որոշել է մեկ (1) աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Դամկար» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vi. Նույն արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ «Դամկար» ՍՊԸ-ն կողմից սահմանված ժամկետում չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունը, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է Մասնակցի ներկայացված հայտը մերժել:

vii. ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կողմից Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարություն է մուտքագրվել 27.11.2018թ.-ի թիվ 1.1/5058-18 գրությամբ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 02.06.2022թ.-ի թիվ 26/26-1/9822-2022 գրությամբ «Դամկար»

ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Սույն գործի փաստերի հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կողմից կահույքի ձեռքբերման նպատակով 29.10.2018թ.-ին հայտարարված «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-18/19» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.11.2018թ.-ին նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետով արձանագրվել է, որ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից՝ «Դամկար» ՍՊԸ-ն չի բավարարում «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջներին, ինչով պայմանավորված նույն արձանագրության 2-րդ կետով որոշում է կայացվում մեկ (1) աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Դամկար» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սակայն նույն արձանագրության 3-րդ կետով արձանագրվել է, որ «Դամկար» ՍՊԸ-ն կողմից սահմանված ժամկետում չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունը, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է Մասնակցի ներկայացված հայտը մերժել:

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կողմից Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարություն է մուտքագրվել

27.11.2018թ.-ի թիվ 1.1/5058-18 գրությամբ՝ Կարգի 45-րդ կետով սահմանված 5 աշխատանքային օրյա ժամկետի խախտմամբ:

Վերոգրյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների համադրման արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հաստատված է համարում, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 15.11.2018թ.-ին՝ Մասնակցի հայտն անբավարար գնահատելու և մերժելու հիմքով, սակայն ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կողմից Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարություն է մուտքագրվել 27.11.2018թ.-ի թիվ 1.1/5058-18 գրությամբ՝ Կարգի 45-րդ կետով սահմանված 5 աշխատանքային օրյա ժամկետի խախտմամբ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Ամբողջացնելով վերը թվարկված իրավական նորմերը, դրանց և գործում առկա փաստերի համադրման արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացված որոշումներից մեկով կարևորել է, որ Հայաստանի Հանրապետության՝ որպես իրավական պետության կարևորագույն հատկանիշ է այն, որ սահմանադրական մակարդակով պետությունը հավաստում է իր հավատարմությունն այդ տեսությանը, ճանաչում և ամրագրում է իր կախվածությունն

իրավունքից, իրավունքի գերակայությունը՝ պետական իշխանության նկատմամբ: Իրավական պետության և իրավունքի գերակայության սկզբունքը, ի թիվս այլոց, դրսևորվում է նրանում, որ Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների՝ որպես անմիջականորեն գործող իրավունք լինելու գաղափարը: Այն իր արտացոլումն է գտել նաև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 5-րդ (Իրավական նորմերի աստիճանակարգությունը) և 6-րդ (Օրինականության սկզբունքը) հոդվածներում՝ մասնավորապես ամրագրելով, որ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և որ **պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով** *(տե՛ս, «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՍՊԸ-ն ընդդեմ Էդիկ Հակոբյանի թիվ ԼԴ/0509/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.07.2018 թվականի որոշումը):*

Ընդ որում, պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, իր գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով և նորմատիվ իրավական ակտերով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված սահմանադրաիրավական այն հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ, ըստ որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, չպետք է հակասեն և պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, օրենքներին կամ նորմատիվ իրավական ակտերին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված իմպերատիվ (պարտադիր) դրույթները, քանի որ, ինչպես վերը նշվեց, Կարգի 45-րդ կետի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու իրավահարաբերության առկայությունը և դրանից հետո նոր միայն ըստ էության անդրադառնալ Պատվիրատուի կողմից ներկայացված Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված համապատասխան հիմքերի օրինաչափությանը: Այլ կերպ ասած՝ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու Ընթացակարգի քննությունը, Կարգի 45-րդ կետով սահմանված

ժամկետների խախտման արդյունքում, սահմանափակվում է ընթացակարգային նորմերի կիրառմամբ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 02.06.2022թ.-ի թիվ 26/26-1/9822-2022 գրությամբ «Դամկար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2022/273 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**